



ՍԱՅԵԱԹ - ՆՈՎԱ

Երբոր բացի տաքարդը հին էջ առ էջ,
Հոգիս վրկայ, տեսայ ծաղկած վարդաստան,
Տեսայ արփին, դեմքն հարսի պէս առտըւան,
Հոն էիր դուն, գոգալներու պարին մէջ:

Ու փամանչան, լարերն ոսկի քել փաշած,
Սրտի նրման կը բաբախէր սիրոյ հետ,
Ո՞վ կայ ուրիշ քեզ հաւասար սրտագէտ
Որ տայ սիրոյ իմաստութիւն անբափանց:

Թէ ես համբեմ լացող վանկե՛րը մէկ մէկ,
Պէտք է ըզքեզ կոչեմ սիրոյ մարտիրոս,
Վարդով նաշխեմ քու փամանչադ փաղցրախօս
Որ տենչ տըւաւ մահէն յոգնած սրտին հէզ:

Թէ աշխարհէս հագար արեւ ալ անցնի,
Քու երգերովդ պիտի բացուի իր առտուն.
Հագար կոյսեր երբ իրար գան տունէ տուն,
Քու տաղերովդ պիտի կապեն խօսք խօսքի:

Ո՞ր արտին մէջ չըցանցցիր հասկն ոսկի,
Ո՞ր տանիքէն չանցար նրման արտոյտի:
Քեզ կը կանչէ կարմիր գինին քառով լի.
Սայեա՛ր-Նովա, եկո՛ւր մեզ հետ խնոյքի:

Երկու հարիւր անցան յիսուն տարիներ,
Երբ քեզ օրհնեց բարի արեւն հայկական.
Մասիսներէն իջաւ Հայոց սուրբ Մուսան,
Իր փամանչան տալու յաւերժ քեզ նըւեր:

Ու սիրեցիր զայն երագով մանկական,
Ականջներուն աղաւանդէ օդ դըրիք,
Լարերը նուրբ արեգակի շող բրիք.
Աշխարհիս մէջ մէկ հատ է քու փամանչան:

Եւ դուն մըտար, սոյսակն ինչպէս վարդին ծոց,
Աղփատ տուններ եւ պալատներ սոնփալի,
Երգեր տըւիր, սրտեր առիր շաղով լի.
Աչքեր առիր՝ մէկը միւսէն հուր ու բոց:

Զար ու բարի աշխարհն եղաւ քեզ տաքար,
Հասար մեզի յաւերժական սիրոյ հետ.
Հագար գարուն քէ եւ անցնի երգաւէտ,
Առանց քեզի վարդ չի բացուիր մեզ համար:

Ք Ա Մ Ա Ն Չ Ա Յ

Մըտէ՛ք մէջլիսն արծաթ քասով գոգալներ,
 Սայեաք-Նովան գինի կ'ուզէ.
 Սիրոյ արիւն, փարչն ոսկիէ.
 Մէջն հուր ու բոց
 Անշէջ հրնոց,
 Ու փամանջան
 Կուրծփի վրբան՝
 Սայեաք-Նովան ձեզ կը սպասէ անհամբեր:
 Ամէն սագի մէջըն գոված փամանջան
 Ազնիւ մարդուն կը հաւատայ,
 Երազ կու տայ, աշխարհ կու տայ,
 Բայց կ'ուզէ որ
 Շուրջը բոլոր
 Բազմին կոյսեր
 Եւ իշխաններ,
 Մէջլիսն ամբողջ ըլլայ սիրոյ բուրաստան:
 Իր խօսքն ունի յարմար ամէն մէկ սրտի.
 — Լեցո՛ւր, Աննա, կարմիր գինի,
 Լեցուր երկու ամբողջ լի.
 Թող փամանջան
 Երգէ միայն
 Քեզի համար:
 Քեզի համար
 Ուրիշ սէր կայ, չեմ գիտեր ո՛վ կը վառի:
 Ապրի ածողն, երգով սիրով քող գայ մեզ
 Նստի բարձին ոսկեդիպակ,
 Փարչով գինին փովն անապակ,
 Լարերն հնչեն՝
 Դուն էն գըլխէն
 Իմաստուն ես,
 Որ կը սիրես
 Քաղցր յանգերով, Կովկաս ծընած կոյսի պէս:
 Փառք ածողին, մէջլիսի տէր, փամանջայ,
 Կովկասն ամբողջ մատաղ ֆեզի,
 Թէ եւ անցնի հազար տարի,
 Քեզ չի քողներ
 Սայեաքն անտէր.
 Թէ վիշտ ունինք,
 Թէ խիղճ ունինք,
 Մեր սրտերուն քաղաւորն ես, փամանջայ:

Ս Է Ր Դ Ա Ն Ո Յ Շ Կ Ը Ծ Ո Ր Է Ր

Ա՛խ, դուն ի՞նչպէս դիմացար
 Սիրոյ անանց բոցերուն,
 Ի՞նչպէս դըրիր երգ ու բառ
 Քամանջայիդ լարերուն:

Մատաղ ըլլամ սիրոյդ վառ,
 Սէրըդ աղբիւր ծիրանի.
 Ո՛չ գինդ է նա, ոչ գոհար
 Եւ ոչ շրպար գոգալի:

Սուրբ ձեռք մ'իջաւ երկինքէն
 Հաղորդութիւն ֆեզ տալու.
 Ուսկի՞ց եկաւ հըրեղէն
 Հոգին ֆեզ հետ ապրելու:

Դու ձօնեցիր մարդերուն
 Սիրոյ պարգէնն ոսկեքաս,
 Մասունքի պէս ամէնուն
 Սիրտըդ տալով մաս առ մաս:

Բլբուլի հետ լաց եղար,
 Բաժակ բաժակ արցունքով,
 Ով որ լըսեց երգ ու բառ՝
 Սիրտը բերաւ սրտիդ փով:

Դանիկներու մէջ քըռան
 Վանկերդ՝ ինչպէս աղաւնի,
 Կըրակ առաւ փամանջան
 Գոգալներէն նագանի:

Բաժակ կու գար բաժակի,
 Սէրըդ անոյշ կը ծորէր.
 Նայուածք կու գար նայուածքի,
 Հոգիդ պըսակ կը դընէր:

Համեստութիւնն էր երանգ
 Եւ լոյսն հանդերձ փու Սիրոյդ.
 Նա ուրիշ էր, ուրիշ կեանք,
 Ոչ անցաւոր երեւոյթ:

Խմաստունի խօսքերով
 Դու Սիրոյ հետ խօսեցար,
 Լեզուդ ալիք, սիրտըդ ծով,
 Ափունքն եղաւ այս աշխարհ:

Լոկ հայ հոգին կընար տալ
 Քեզ Սիրոյ գիրքն հընօրեայ.
 Դիւրին չէ մեր սիրտն ըզգալ,
 Թէ արեւ է, քէ փուրայ:

Մասիսներէն ֆեզ բերին
 Եօքը գոյնով ծիածան,
 Պարգէն տըրիւր փու եսքին,
 Սէր եւ գարուն հայկական:

Սայեաք-Նովա, խօսք կ'ուզեմ,
 Իմ սիրտըս պաս մի՛ քողներ.
 Քամանջայէդ լար կ'ուզեմ,
 Ոսկի քելով՝ վըրան Սէր:

Մեռնիմ ֆեզ կաք տըւողին,
 Քեզ կեանք տըւող մեր հողին.
 Ակն ուրիշ է փու ջըրին,
 Բիւր երանի խըմողին:

ԽՐԱՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ես ո՞ւր գրեմ քու խրատներդ մի առ մի.
Ըսիր դու ինձ՝ վանք սիրէ,
Աղօթք սիրէ, քար սիրէ.
Ու սիրտս ըրիր
Մատենան անգիր
Եջերը լայն, դաշտի նըման հասկալի:

Հեռանալով աշխարհի հեշտ օրերէն,
Վանքի նամբան ինձ բացիր.
Աստուած կայ հոն, ինձ ըսիր,
Եւ դու յոգնած
Սիրտդ մաշած,
Յոյց տըւիր ինձ Հաղթատի խաչն հեռուէն:

Խաչին վըրայ տեսայ հեծֆե՛րըդ խաչուած,
Արցունք տեսայ ցօղ առ ցօղ,
Դուն էիր հոն աղօթող,
Հագած կապայ,
Սեւ, անուշայ,
Բայց ամպի տակ՝ արեւ հոգիդ միշտ մընաց:

Երբ քնեցին նակտիդ միտուն սրբութեան,
Հեռուն լացին գոգալներ,
Բայց Հաղթատի վանքն ուրախ էր.
Երգ տարիր հոն
Ու սիրտդ ձօն,
Նոր երգ լըսեց այնտեղ ամէն մէկ խորան:

Քար սիրեցիր ու վանքին հետ եղար վանք,
Քանդակեցիր ամէն տեղ
Խօսք եւ աղօթք սրտագեղ,
Մատներդ գրիչ,
Ու սէրդ երգիչ,
Մութ որմերուն տըւիր երկնի անըրջանք:

Աշխարհիս մէջ՝ ա՛յն քաղաքին տեղ չըկայ,
Սայեաք-Նովա, քար սիրէ.
Աստուած սիրէ, գիր սիրէ.
Աւետարան
Սրտիդ վըրան
Մեզի համար՝ Աստուծոյ հետ դու կարդա:

ՆԱՀԱՏԱԿԻՆ ԵՐԱՆԻ

Երեկոյ էր. իջան յուշիկ ըստուերներ,
Ժամին սուրբե՛րը մըտան լուս աղօթքի.
— Դուրս ելիր դու, ձայն մը գոչեց ապալեր,
Եւ գոյգ դուներ նըռնչեցին մեկուսի:

— Դուրս ելիր դու, սաստը հնչեց բարբարոս,
Ուրացիր դու հաչ եւ Յիսուս միասին.
— Չեմ ուրանար, չեմ հեռանար, լաւ եմ հոս,
Հեզիկ ձայնեց հէգ քամանչան Սայեաքին:

— Դուրս ելիր դու, ձայնը խաղաղ աւելի,
Գողաց ինչպէս Տեմաւենտի որսուներ.
— Չեմ ուրանար, մահն է ինձ հոս սիրելի,
Հեզիկ ձայնեց՝ խորանին սիրտն առնըներ:

— Դուրս ելիր դու, հազար ձայներ միասին,
Գողացին գերդ ծովեր յուզող քամիներ.
— Չեմ հեռանար, չեմ ուրանար Միածինն,
Հեզիկ հնչեց լեզուն քնար սիրաչեր:

Ու մօտեցան ըսպառնալից հազար սուր,
Գողաց խորանն, առին սիւներն արծաթ փայլ.
Մոմերն եկան իրարու հետ սուրբ համբոյր,
Կուրծքը բացաւ Սայեաք-Նովան անայլայլ:

— Շահին սուրն է, ըսին անոնք մէկ բերան.
Շահին սուրն է հազար շանքով Իրանի,
Վա՛յ կեանքին՝ սուրին դիմաց միալիման:
Հեզիկ ձայնեց — Նահատակին երանի: —

Եւ սուրն իջաւ շանքի մը պէս հըրեղէն,
Սուրեր հասան, մէկը միւսէն կատաղի.
Թօքափեցան մոմ եւ աղօթք խորանէն:
Ո՞վ ցանեց հոն կարմիր վարդեր Մայիսի:

Ո՞վ ցանեց հոն կարմիր վարդեր հազար մի.
Ամէն մէկ քերթ պատկերն ունի Յիսուսի.
Ու խաչի ձեւ. բայց հոն է միշտ աղօթքի
Սայեաք-Նովան. Նահատակին երանի:

Հոկտեմբեր, 1963

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ